ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. հունվարի 14-ից 16-ը Միացյալ Արաբական Էմիրություններ (Աբու Դաբի)՝ բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Էրիկ Գրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Բնապահպանության նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Միացյալ Արաբական Էմիրություններ (Աբու Դաբի)

   2019թ. հունվարի 14-ից 16-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Միացյալ Արաբական Էմիրությունների կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարարություն

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն՝ «Աբու Դաբի կայուն շաբաթ» խորագրով միջոցառման բացմանը, մրցանակաբաշխությանը և «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Միացյալ Արաբական Էմիրությունների կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարարության միջև շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագրի ստորագրմանը:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   2013թ. սկսած «Աբու Դաբի կայուն շաբաթ» խորագրով միջոցառմանը մասնակցում է ավելի քան 38.000 պատվիրակներ և 600 մեդիա ներկայացուցիչներ շուրջ 175 երկրներից:
   Միջոցառման շրջանակներում քննարկվեցին կայուն զարգացման վերաբերյալ մի շարք հիմնախնդիրները և այդ ոլորտում ձեռք բերված հաջողություններն, ինչպես նաև վերականգնվող էներգիայի վերաբերյալ «Միջազգային վերականգնվող էներգիայի գործակալության 9-րդ գլխավոր ասամբլեան»:

Քննարկվեցին նաև գլոբալ տնտեսության միջոցով արդյունաբերության հարմարվողականությունը թվային փոխակերմանն, ինչպես նաև այն նոր հնարավորությունները, որոնք ուղղված են գլոբալ կայունության մարտահրավերներին: Տեղի ունեցավ նաև մրցանակաբաշխություն «Վերականգնվող էներգիա և կայունություն» խորագրով:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ԱՄԷ կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարար Թանի Ահմեդ Ալ Զեյուդիին հրավիրել եմ Հայաստան՝ մասնակցելու Կովկասյան ընձառյուծի տարվան նվիրված միջոցառումներին: Այցի շրջանակներում այցելել եմ Գեղանի արոս թռչնատեսակի պահպանման միջազգային հիմնադրամ, հանդիպումներ եմ ունեցել ԱՄԷ մի շարք նախարարների հետ, ինչպես նաև մասնակցել եմ «Աբու Դաբի կայունության շաբաթ» ֆորումի շրջանակում կայացած «Ապագայի գագաթնաժողով» (Future Summit) խորագրով համաժողովին:

8. ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ս.թ. հունվարի 15-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի Աբու Դաբի կատարած պաշտոնական այցի շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Միացյալ Արաբական Էմիրությունների կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարարության միջև շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագիր: Հուշագրով նախատեսվող համագործակցությունը կիրականացվի մի շարք ուղղություններով, այդ թվում՝ Կլիմայի փոփոխություն, կենսաբազմազանության պահպանություն, էկոտուրիզմ, բնական ռեսուրսների բանական օգտագործում և այլն:

Բնապահպանության նախարար՝

Էրիկ Գրիգորյան